ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ[1]

Գայանե Սիմոնյան

Քրիստոնեական Եկեղեցու աստվածաբանության կարևորագույն խնդիրներից են քրիստոնեական տոների մեկնությունները: Տոների ժամանակի ու տոնացույցում դրանց տեղի խնդիրը կիրառական աստվածաբանության կարևոր գործառույթներից է: Այդ իսկ պատճառով Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի տարբեր բաժիններում կամ գլուխներում («Ազգաց կանոններ», «Ազնուականոնք ՇԼԲ-ամյաց.... »՝ զատկացուցակներ, «Մեկնութիւն տումարի» ևն) տեղ են գտել այդ տոների ժամանակային գրանցումներ ու դրանց մեկնություններ, ինչպես և տոների այս կամ այն ժամանակի կատարման ոչ միայն աստվածաբանական, այլև տոմարական հիմնավորումներ:

Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուի «Ազգաց ազնուականոններ» մասում պահպանվել են հետևյալ տոներն ու դրանց ժամանակային գրանցումները 15 ազգերի՝ ժամանակի գործածական անշարժ տոմարների ամիս-ամսաթվերով[2]՝ 1.«Յունուարի 6 = Քաղոց 29-ին Յայտնութիւն Քրիստոսի ի մեծ հոռի ԺԱ, աւրն՝ Ե-շբ. և Մկրտութեան աւրն կիրակի»[3], 2. «Փետրվարի ԺԴ = Մեհեկի Ը՝ Տեառնընդառաջ»[4], 3. «Ապրիլի Զ = Արեգի ԻԹ՝ Աւետում»[5], 4. «Ապրիլի 12-ին եղել է Խաչելության օր», 5. «Մայիսի Է = Ահեկան Լ՝ Երևումն խաչին»[6], 6. «Յունիսի Թ.

---

[1] Սույն հոդվածը հրատարակվում է 15T-6D145 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

[2] Ստորև տոների օրերը կներկայացնենք միայն հայոց Սակավագադիր անշարժ տոմարի և հռոմեացոց տոմարի զուգադրումներով, մյուս ազգերի տոմարների զուգադրումները կգտնենք «Ազգաց ազնուականոններում»:

[3] **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 160-161:

[4] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 163:

[5] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 167:

[6] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 168-169:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գայանե Սիմոնյան - ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ 7

Նարինե Միրզոյան - ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ» ԵՐԿԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 16

Տ.Հեթում քահանա Թարվերդյան - ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՒՄ Ե-Ը ԴԴ. 32

Էլյա Սարիբեկյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ» ԵՐԿՈՒՄ ԱՌԿԱ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 59

Արսեն Հարությունյան, Հայկ Հակոբյան - «ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ԽՈՐԱՆ» ԲԱՌԵԶՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ 87

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան - ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ 99

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան - ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ 113

Նելլի Ժամկոչյան - ԷՋՄԻԱԾՆԻ V ԴԱՐԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ 134

Արշակ Բալյան - ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ... 146

Սարգիս Մելքոնյան - «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԹԵՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ/ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԸ 158

Հասմիկ Աբրահամյան - ՎԱՐԴԱՎԱՌՅԱՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 177

ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մկրտչյան - ՆՈՐ ՏԱՐԻ - ԱՄԱՆՈՐ (ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ) 209

Սամվել Մկրտչյան - ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ (ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ) 216

Գոհար Սարգսյան - ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԿՐՈՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐ -ՀԱՅԱՑՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 225

Հովհաննես Հովհաննիսյան - ՆԵՍՏՈՐԻ ՊՐՈՍՊՈՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՆ ԻԲՐԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ 235

Պարգև Բարսեղյան - ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ 245

Լիզա Քարիմյան - ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԽՈԼԱՍՏԻԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ: ԱՆՍԵԼՄ ՔԵՆՏԵՐԲԵՐԱՑՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 255

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անուշավան եպս. Ժամկոչյան, Լիլիթ Սիմոնյան - ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆԵԲՐՈՎԹԸ ԵՎ ՆԵՄՐՈՒԹ ԹԱԳԱՎՈՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 273

Անուշավան Պետրոսյան - ՔՐԴԵՐԻ, ԵԶԴԻՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱԶԳԱ-ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ ՎԵՊՈՒՄ» 303
Վոլոդյա Գասպարյան - ԽՈՐՀՐԴԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 317

Հասմիկ Հարությունյան - ԿԻՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ 333

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ XVIII -XIX Դ. ՍԿԶԲՈՒՄ: ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 344
Գայանե Հակոբյան - ՀՀ ՆԵՐԳԱՂԹԱԾ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ 360
Տեղեկություններ հեղինակների մասին 374
Ի գիտություն հեղինակների 383

СОДЕРЖАНИЕ

БОГОСЛОВИЕ

Гаяне Симонян - ПРАЗДНИК РОЖДЕСТВА ХРИСТА И ДАТА РОЖДЕНИЯ 7
Нарине Мирзоян - ПРИМЕНЕНИЕ «ГИРК ДАТАСТАНИ» («СУДЕБНИКА») МХИТАРА ГОША В АРМЯНСКИХ ОБЩИНАХ 16
Иерей Хетум Тарвердян - ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ХРИСТОЛОГИЧЕСКИХ СПОРАХ V-VIII ВВ. 32
Эля Сарибекян - БОГОСЛОВСКИЕ ВОПРОСЫ В "КОММЕНТАРИИ НА КНИГУ ИОВА" ГРИГОРА ТАТЕВАЦИ 59
А. Арутюнян, А. Акопян - ОДИНАКОВОЕ ЗНАЧЕНИЕ ПОНЯТИЙ “ЦЕРКОВЬ” И “РИЗНИЦА” В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ 87

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

Ашот Манучарян - САГМОСАВАНК НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ 99
Лилит Симонян, Карен Оганисян - К ВОПРОСУ О ПРАЗДНИЧНО-ОБРЯДОВЫХ ОБЫЧАЯХ СВЯТИЛИЩ ТУХ МАНУК 113
Нелли Жамкочян - ОБ ОДНОНЕФНОМ ЦЕРКВЕ В ЭЧМИАДЗИНЕ (V ВЕК) 134
Аршак Балян - МИТРОПОЛИТ БАГДАСАР И ЕПАРХИАЛЬНАЯ ШКОЛА В ШУШИ 146
Саргис Мелконян - ВОПРОС СОБОРА В ФЕОДОСИОПОЛЬ/КАРИНЕ УПАМИНАЮЩИЙСЯ В «АРМЯНСКОЙ КНИГЕ КАНОНОВ» 158

Асмик Абраамян - КЛАССИФИКАЦИЯ МЕСТ ПАЛОМНИЧЕСТВА ВАРДАВАРА 177

ИСТОРИЯ РЕЛИГИЙ

Самвел Мкртчян - НОВЫЙ ГОД - АМАНОР (ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА) 209
Самвел Мкртчян - РОЖДЕСТВО ХРИСТОВО (ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА) 216

= Մարգաց Գ՝ տաւն Զաքարիա մարգարէին»[1], 7. «Հունիսի ԺԴ = Մարգաց Ը՝ տաւն Եղիա մարգարեին»[2], 8. «Յուլիսի Զ = Մարգաց Լ՝ տաւն Յեսեայ մարգարէին»[3], 9. «Յուլիսի Ժ = Հրոտից Դ՝ Ծնունդ Յովհաննու Մկրտչի»[4], 10. «Աւգոստոսի ԺԴ = Նաւասարդի Դ՝ Փոխումն սուրբ աստուածածնի»[5], 11. «Սեպտեմբերի ԺԴ = Հոռի Ե՝ Խաչի վերացում»[6], 12. «Սեպտեմբերի ԻԶ = Հոռի ԺԶ՝ Օր սգոյ վասն յանցանաց որթոյ»[7], 13. «Սեպտեմբերի ԻԱ = Հոռի ԺԲ՝ Սուրբ Գէորգայ բարեկենդան»[8], 14. «Սեպտեմբերի ԻԷ = Հոռի ԺԸ՝ Օր քաւութեան և պապանձումն Զաքարիայի»[9], 15. «Հոկտեմբերի Բ= Հոռի ԻԳ՝ Տաղաւարահարաց սկիզբն»[10], 16. «Հոկտեմբերի Թ = Հոռի Լ՝ Կատարումն Տաղաւարահարաց»[11], 17. «Հոկտեմբերի 10 = Սահմի 1՝ Յղութիւն Եղիսաբէթի»[12], 18. «Հոկտեմբերի 27 = Սահմի 18՝ Խաչի գիւտ»[13], 19. «Նոյեմբերի 22 = Տրէ 14՝ Ըմբռնաղ»[14], 20. «Դեկտեմբերի 9 = Քաղոց 1 Սբ. Յակոբայ Բարեկենդան»[15], 21. «Դեկտեմբերի 28 = Քաղոց 20՝ Յայտնութեան Բարեկենդան»[16]:

Հայոց եկեղեցական տոնական տարվա կտրվածքով առաջինը Քրիստոսի Ծննդյան ու Հայտնության տոնն է:

1. «Յունուարի 6 = Քաղոց 29-ին - Յայտնութիւն Քրիստոսի ի մեծ հոռի ԺԱ, աւրն՝ Ե-շբ. և Մկրտութեան աւրն կիրակի»[17]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 171:
[3] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 172-173:
[4] Նույն տեղում:
[5] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 174-175:
[6] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 176-177:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում:
[10] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 178-179:
[11] Նույն տեղում:
[12] Նույն տեղում:
[13] Նույն տեղում:
[14] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 180-181:
[15] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 182-183:
[16] Նույն տեղում:
[17] **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 160-161:

Ինչպես գիտենք, Հայոց Եկեղեցին Քրիստոսի Ծննդյան կամ Հայտնության ու Մկրտության տոները նշում է միաժամանակ: Այստեղ շարադրանքը չենք ծանրաբեռնի այդ երկու տոները միասնաբար նույն օրը՝ հունվարի 6-ին կատարելու խնդրի պարզաբանությամբ, որի և՛ աստվածաբանական, և՛ տոմարական մեկնությունը լավագույնս կատարել ու հիմնավորել է Անանիա Շիրակացին իր «Ի Յայտնութեան Տեառն» ճառում: Միայն նշենք, որ Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնը մեր եկեղեցական տոների «գլխավորն ու առաջնեկն» է: Այն Տիրոջ Մկրտության տոնի հետ միասնաբար հունվարի 6-ին = տիբեթ ամսի 21-ին կատարելու կարգն իրենց կանոններում (6-րդ գլուխ) սահմանել են առաքյալները: Երկու տոները միասնաբար կատարելու մասին հիշում է նաև Մակար Հայրապետը, ով Նիկիայի ժողովի (325 թ.) մասնակից 316 հայրերից մեկն էր, Հայաստան ուղարկած խրատական գրության մեջ[1]:

Համաքրիստոնեական տոնացույցի երուսաղեմյան տարբերակում ևս, որը 422 թ. թարգմանվեց ու խմբագրվեց Սահակ կաթողիկոսի կողմից ու դարձավ հայոց առաջին «Կանոնք կամ կանոնադրություն ընթերցուածոց» վերնագրով տոնացույցը, Քրիստոսի Հայտնությունն ու Մկրտությունը միասնաբար հունվարի 6-ին տոնելու կարգը պահպանել է Կյուրեղ Երուսաղեմացին: Նա միաժամանակ դեկտեմբերի 25-ին կանոնել է Հակոբ Տեառնեղբոր ու Դավիթ մարգարեի տոները: Այս կանոնները պահպանվեցին մինչև Հոբնաղ[2], որից սկսած՝ արդեն Քրիստոսի Ծննդյան ու Մկրտության միասնաբար կատարվող տոները բաժանվեցին: Քրիստոսի Ծնունդն սկսեց նշվել դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին: Սակայն Հայոց Եկեղեցին դարեր շարունակ պայքարել է այս «նորաբեր» կարգի դեմ ու դավանել է առաջին ավանդությունը:

Քրիստոսի Հայտնությունն ու Մկրտությունը միասնաբար հունվարի 6-ին տոնելու կանոններն անփոփոխ անցել են հայոց հետագա ժամանակների տոնացույցեր, ինչի մասին վկայում են ոչ միայն «Կանոնք ընթերցուածոցի» հետագա խմբագրությունները, այլև տոնապատճառ ժողովածուները, բազմաթիվ աստվածաբանական ճառեր, մեկնություններ ու այլևայլ սկզբնաղբյուրներ[3]:

---

[1] Հայտնության ճառ, **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, Եր., 1979, էջ 148-150:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը, **Լ. Սարգսյան**, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը:

Հովհաննես Սարկավագի «Ազգաց ազնուականոններում» ևս առաջին տոնը եկեղեցական տոնական տարվա կտրվածքով, որը համարյա թե համընկնում է հուլյան տոմարի տարեսկզբի հետ Քրիստոսի Հայտնության տոնն է, որի ամիս-ամսաթիվն ուղղակիորեն տրված է 15 ազգերի ժամանակի գործածական անշարժ տոմարներով (Յունվարի Զ (հոռոմոց) = դիւստրոս Զ (յունաց) = քանուն խրա Զ (ասորոց) = Քաղոց ԻԹ (հայոց անշարժ) = շբաթ ԻԱ (եբրայեցոց) = կաղանդիոս ԻԱ (արաբացոց) = թեսաոն ԻԱ (մակեդոնացոց) = մեքիր ԺԱ (եգիպտացոց) = եմքաթիթ ԺԱ (եթէոպացոց) = բոեդրեմիոն ԺԱ (աթենացոց) = պորէպիոս ԺԱ (բիւթանացոց) = քսանթրիտրէ ԺԱ (կապադոկացոց) = նունկնի ԺԱ (վրաց) = մարէ ԺԱ (աղուանից) = ևն), ինչպես նաև Հայոց շարժական տոմարի, այն է՝ Հայոց մեծ թվականի ամիս-ամսաթվով (հունվարի 6 = Հոռի 11-ին)[1]: Տրված են նաև տոնի շաբաթագրերը՝ Հայտնության համար հինգշաբթի, իսկ Մկրտության համար կիրակի:

Պարզ տրամաբանությամբ միևնույն օրը կատարվող այդ երկու տոները միևնույն տարվա կտրվածքում տարբեր շաբաթագրեր պետք է չունենային: Առաջին հայացքից անհասկանալի է թվում, թե ինչու է Հովհաննես Սարկավագը կատարել նման հիշատակում. Յայտնությունը Հոռի ԺԱ (11)-ին (հինգշաբթի) և Մկրտության օրը՝ կիրակի: Այդ իսկ պատճառով պարզենք, թե հայոց շարժական տոմարի կամ Հայոց մեծ թվականի որ քառամյակում է Հոռի ամսի 11-ը համապատասխանել հունվարի 6-ին: Ըստ Հ. Բադալյանի կազմած Հայոց մեծ թվականի և հուլյան տոմարի համեմատական աղյուսակի՝ այսպիսի զուգադրություն եղել է ներկա 1457/1460 թթ.[2] քառամյակում: Ասենք, որ միայն ներկա 1457/1460 թվականների քառամյակի բացահայտումը հնարավորություն է տալիս ասելու, որ Հովհաննես Սարկավագը Հիսուս Քրիստոսի ծննդյան տարեթիվը բացահայտելու համար օգտագործել է Հայոց շարժական տոմարի, այն է՝ Հայկյան 1460-ամյա պարբերաշրջանի օրինաչափությունը, այսինքն Հոռի 11-ը համապատասխանել է հունվարի 6-ին ոչ միայն ներկա

---

[1] **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 160-161:

[2] 1457/1460 թթ. քառամյակում Հոռի 1-ը համապատասխանել է դեկտեմբերի 27-ին, հետևապես Հոռի 11-ն էլ կհամապատասխանի հունվարի 6-ին: **Հ. Բադալյան**, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 388-389:

1457/1460 թթ., այլև մ. թ. ա. 4 - մ. թ. ա. 1 թթ. քառամյակներում (1457/1460 - 1460) ևն: Նշանակում է, որ Հովհաննես Սարկավագը այստեղ ուղղակիորեն տվել է Քրիստոսի ծննդյան իր հաշվարկած տարվա ամիս-ամսաթիվը՝ Հայոց մեծ թվականով կամ հայոց շարժական տոմարով: Իսկ թե այդ քառամյակների (մ.թ.ա 4 - մ.թ.ա. 1) որ տարում է Հոռի 11-ը եղել «*Ե-շաբթի*» (հինգշաբթի – ընդգծումը՝ Գ. Ս.), պետք է դարձյալ հաշվել՝ նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ այլ բնագրերում Քրիստոսի ծննդյան օրվա շաբաթագիրը նշված է «ուրբաթ»: Այսպես, Մխիթար Գոշը վրացիներին ուղղված իր թղթում գրում է. «Իսկ տաւնս ծննդեան Քրիստոսի տաւնեմք որպէս գրեալ է յԱւետարանին Ղուկայ եւ ի Կանոնս առաքելոց յունվարի Զ (6)՝ տաւն Ծննդեան եւ Յայտնութեան: Եւ Յակոբայ եւ Կիւրեղ այնպէս կարգեալ են, եւ Ռստակէս ի ժողովոյն Նիկիաի հայրապետէն Երուսաղէմի այնպէս ընկալաւ զեդեալ ընթերցուածն յառաքելոցն եւ եբեր ի Հայս: Նոյնպէս եւ այլ հայրապետք ազգաց: Ըստ այսմ աւրինակի եւ աւետիքն պատահի ի Զ (6) ապրիլի եւ ծնունդն ՝ յունվարի Զ (6): Եւ զկնի Լ (30) ամի մկրտութիւնն դարձեալ ի յունվարի Զ (6) պատահեաց վասն այն մասին կարգեաց զերկուս տաւնս տաւնել սուրբ առաքեալն Յակոբոս, զի նոյն էր քանիք ամսոյն, թէպէտ եւ ոչ նոյն պատկէր աւուրն, զի ծնունդն **յուրբաթու** էր եւ մկրտութիւնն ի **կիրակէի**»[1]:

Քառամյակի որերորդ տարվա հարցի լուծմանը նպաստում է այն հանգամանքը, որ երկու բնագրերում էլ մկրտության տարում՝ տեսականորեն 30 թվականին, հունվարի 6-ը եղել է կիրակի: Գտնենք 30 թվականի յոթներյակը: Եթե 30 թվականի հունվարի 6-ը՝ կիրակի է, ապա հետհաշվարկով՝ հունվարի 5-ը՝ շաբաթ, հունվարի 4-ը՝ ուրբաթ, 3-ը՝ հինգշաբթի, հունվարի 2-ը՝ չորեքշաբթի, հունվարի 1-ը՝ երեքշաբթի, 29 թվականի դեկտեմբերի 31-ը եղել է երկուշաբթի, հետևապես 30 թ. յոթներյակը եղել է Բ (2): Ինչպես գիտենք, շաբաթական շարքի կրկնման պարբերաշրջանը (բեսեքիստոն) 28 տարի է, հետևապես մ. թ. 2 թվականին յոթներյակը ևս եղել է Բ (2), 1 թ.-ին՝ Ա (1), (կիրակի), իսկ մ. թ. ա.1 թ. ունեցել է Զ (6 - ուրբաթ) և Է (7 - շաբաթ) արժեքները[2], մ. թ. ա.2 թվականի

---

[1] **Մխիթար վարդապետ Գոշ**, Թուղթ առ Վրացիսն, յաղագս ուղղափառութեան հաւատոյ, Գանձասար, 1996, հ. Զ, էջ 362-364:

[2] Ներկա 1 թվականից հաշված՝ յուրաքանչյուր 4-րդ տարին դիտվում է որպես նահանջի տարի: Նշանակում է, որ ներկա մեկ թվականի նախորդ տարին, այն է՝ մ.թ.ա. 1 թ.-ը

յոթնյակը եղել է Ե (5) (հինգշաբթի), մ. թ. ա. 3 թվականինը՝ Դ (4) (չորեքշաբթի), իսկ մ. թ. ա. 4 թ. Գ (3) (երեքշաբթի): Այսպես, ստանալով մեզ հետաքրքրող տարիների քառամյակի՝ մ. թ. ա. 4 – մ. թ. ա. 1 թվականների յոթներյակները՝ որոշենք այդ տարիների հունվարի 6-ի շաբաթագրերը՝ օրագյուտի կանոնով, այն է՝ «Աւրագիւտ այսպէ՛ս արա. կա՛լ զաւուրս ամսոյն, զկրկնակն նորին. և զևթներեակ տարոյն և ե՛րթ Լ (30), Լ (30), որ ի խոնարհ մնա՝ այն է. թէ Ա (1) մնայ՝ կիւրակէ է, թէ՝ Բ (2)՝ երկու շաբաթ»[1]:

Մ. թ. ա. 4 թվ. յոթներյակը՝ 3 + հունվարի կրկնակը՝ 0 + ամսաթիվը՝ 6 = 9 : 7 = 2 մն. (երկուշաբթի):

Մ. թ. ա. 3 թվ. յոթներյակը՝ 4 + հունվարի կրկնակը՝ 0 + ամսաթիվը՝ 6 = 10 : 7 = 3 մն. (երեքշաբթի):

Մ. թ. ա. 2 թվ. յոթներյակը՝ 5 + հունվարի կրկնակը՝ 0 + ամսաթիվը՝ 6 = 11 : 7 = 4 մն. (չորեքշաբթի):

Մ. թ. ա. 1 թվ. յոթներյակը՝ 6 (և 7) + հունվարի կրկնակը՝ 0 + ամսաթիվը՝ 6 = 12 : 7 = 5 մն. (հինգշաբթի) և 7 + 6 = 13 : 7 = 6 (ուրբաթ):

Մ. թ. 1 թվ. յոթներյակը՝ 1 + հունվարի կրկնակը՝ 0 + ամսաթիվը՝ 6 = 7 (շաբաթ)[2]:

Այսպիսով, Քրիստոսի ծննդյան օրվա շաբաթագիրը՝ հինգշաբթի, ինչպես նաև «ուրբաթ», եղել է մ. թ. ա. 1 թվականին: Հետևապես, Հովհաննես Սարկավագի «Ազգաց ազնուականոններում», ինչպես և Մխիթար Գոշի՝ վրացիներին ուղղված թղթում գրված շաբաթագրերից Քրիստոսի ծննդյան թվականի համար ճիշտն ու առավել ստույգը Հովհաննես Սարկավագի գրած շաբաթագիրն է, քանի որ նահանջ տարում 6 արժեքով յոթներյակը կիրառելի է մինչև փետրվարի 28, իսկ 7-ովը՝ յոթներյա-

---

ևս եղել է նահանջի տարի, այդ իսկ պատճառով ունի երկու յոթներյակ՝ 6 և 7: Տե՛ս նաև **Э. Бикерман**, Хронология древнего мира, М. 1975, с. 8:

[1] Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխատությունը, **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 203:

[2] Հ. Բադալյանը կարծում է, որ «մեր թվականության առաջին տարվա յոթներեակը եղել է շաբաթ», սակայն արժեքը ոչ թե 7 է համարում, այլ 6 (6-րդ օրը): **Հ. Բադալյան**, նշված աշխ., էջ 126: Սակայն հիշենք, որ Հովհաննես Սարկավագի մեկնության մեջ ինչպես յոթներյակի, այնպես էլ օրագյուտի ժամանակ, Ա-ն՝ 1-ը, նշանակում է կիրակի, Զ-ն՝ 6-րդ օրը, ուրբաթ է, իսկ շաբաթը 7-րդ օրն է, յոթներյակը՝ Է:

կը՝ միայն փետրվարի 29-ից սկսած: Իսկ քանի որ հունվարի 6-ը նահանջից առաջ է, ապա կիրառելի է յոթներյակի 6 արժեքը:

Քրիստոսի Ծննդյան կամ Հայտնության տոնի օրվան՝ հունվարի 6-ին, օրը հինգշաբթի, համարժեք դնելով Հայոց մեծ թվականի հաշվով Հոռի 11-ը, հեղինակը նկատի է ունեցել իր հաշվումներով Քրիստոսի փաստացի ծննդյան տարին, որը մեր թվականության համակարգի հետ ունի մեկ տարվա տարբերություն, այն համապատասխանում է մ. թ. ա. 1 թվականին: Սակայն, Քրիստոսի ծնունդը դնելով մ. թ. ա. 1 թվականին, իրական հավասարություն է ստեղծում ներկա ու Քրիստոսի ծնունդից հաշվվող նոր էրայի տարիների միջև, այսինքն՝ Հայոց մեծ թվականի համակարգով ներկա 1 թվականը հավասարվում է ոչ թե Քրիստոսի ծննդյան, այլ Քրիստոսից հետո մեկ թվականի հետ: Ներկա մեկ թվականին հունվարի 6-ը եղել է շաբաթ, իսկ հունվարի 1-ը՝ երկուշաբթի:

Քանի որ, ըստ աստվածաշնչային տեղեկությունների, Քրիստոսի ծնունդն առնչվում է Զաքարիայի պապանձման, Եղիսաբեթի հղացման ու Հովհաննես Մկրտչի ծննդյան հետ, անդրադառնանք նաև նրանց տոնական օրերին:

Ինչ վերաբերում է Հովհաննես Մկրտչի ծննդյան տոնին, ապա, ըստ աստվածաշնչային տեղեկության մեկնությունների՝ Եղիսաբեթի հղության 6-րդ ամսին տեղի ունեցավ Մարիամի ավետումը՝ ապրիլի 6 (7)-ին: Այստեղից կարելի է հետևեցնել, որ ապրիլի 6-ից 3 ամիս անց, այն է՝ հունիսի 6-ից հետո պետք է լիներ Հովհաննես Մկրտչի ծնունդը: Ինչպես նշված է Սարկավագի «Ազգաց ազնուականոններում»,Եղիսաբեթի հղացումը կատարվել է հոկտեմբերի 10-ին, անմիջապես Տաղավարահարաց տոնի հաջորդ օրը, որի մասին հիշատակում է Սարկավագը՝ «Հոկտեմբերի Թ = Հոռի Լ՝ Կատարումն Տաղաւարահարաց»[1] և «Հոկտեմբերի Ժ = Սահմի Ա՝ Յղութիւն Եղիսաբէթի»[2], իսկ Հովհաննես Մկրտչի ծնունդը հուլիսի 10-ին է դրված:

Հովհաննես Մկրտչի ծննդյան օրը հուլիսի 10-ին դնելը պարզ տոմարական հաշվումների արդյունք է: Համապատասխանում է Անանիա Շիրակացու «Յայտնութեան» ճառում Քրիստոսի ծննդյան տոնի ամսաթվի (հունվարի 6) հաշվումներին: Ինչպես հայտնում է Անանիա Շիրակացին,

---

[1] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 178-179:

[2] Նույն տեղում:

անդրանկածնությունը տևում է 276 օր: Տաղավարահարաց տոնից՝ հոկտեմբերի 9-ից հետո, հոկտեմբերի 10-ին է հղացվել Հովհաննես Մկրտիչը, և այդ օրվանից 276 օր հաշված, լինում է հուլիսի 10-ը: Կամ էլ Մարիամ Աստվածածնին Քրիստոսին հղանալու մասին Գաբրիելն ավետել է ապրիլի 6-ին, երբ Եղիսաբեթի՝ Հովհաննես Մկրտչով հղության 6-րդ ամիսը կամ 180-րդ օրն էր[1]: Հետևապես 276-ից հանելով 180 կստանանք 96: Ապրիլի 6-ից հաշված 96 օր՝ ստանում ենք հուլիսի 10-ը (25 + 31 + 30 +10):

Ինչ վերաբերում է Տաղավարահարաց տոնին, այն կատարվում է 7-օրեքով, սկսում է Թշրին 15-ին = հոկտեմբերի 2-ին և ավարտվում Թշրին 21-ին = հոկտեմբերի 9-ին: Տոնի անվանումն առնչվում է տոնակատարության ժամանակ, ըստ Հրեական օրենքի, կանաչ ոստերով ծածկված տաղավարներ կառուցելու և տոնի օրերին դրանց մեջ բնակվելու սովորույթին (Ղևտ., ԻԴ : 40-42, Նէեմ., Ը : 14):

Այսպիսով, միայն Հովհաննես Սարկավագի «Ազգաց ազնվականոններում» եկեղեցական տոնական օրերին կատարված նշումները տոմարագիտորեն հաստատում են Հայոց եկեղեցու տոնական օրերի համոզչությունը և խիստ ներդաշնակ են ներկա թվականության համակարգի հետ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Գայանե Սիմոնյան

Բանալի բառեր *- Հայոց շարժական տոմար, Հայոց անշարժ տոմար, Քրիստոսի Ծնունդ և Հայտնություն, բեսեքիստոն, 1460-ամյա պարբերաշրջան, տոմարական ժողովածու, Հովհաննես Սարկավագ, հունվարի 6*

Սույն հոդվածը նվիրված է սակավ ուսումնասիրված հարցերից մեկին՝ քրիստոնեական տոների թվականների հետազոտությանը: Հայոց անշարժ տոմարի հիմնադիր Հովհաննես Սարկավագը առանձնակի ուշադրություն է դարձրել հայոց եկեղեցական տոներին: Իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական-տոնացուցային ժողովածուի տարբեր մասերում հետաքրքիր գրանցումներ ու մեկնություններ կան քրիստոնեական տոների կատարման ժամանակների վերաբերյալ: Ըստ դրանց՝ տոնական տարին սկսել է հունվարի 6-ին = Քաղոց 29-ին և ավարտվել Սբ. Ծննդյան Բարեկենդանով: Ըստ նրա տեղե-

---

[1] **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, Եր., 1979, էջ 157:

կությունների՝ Քրիստոս ծնվել է մ. թ. ա. 1 թվականի հունվարի 6-ին, իսկ ներկա 1 թվականին եղել է 1 տարեկան:

ПРАЗДНИК РОЖДЕСТВА ХРИСТА И ДАТА РОЖДЕНИЯ

Гаяне Симонян

Ключевые слова *- Армянский подвижный календарь, Армянский неподвижный календарь, Праздник Рождества Христа, Бесекист, 1460-летний цыкль, календарный сборник, Ованнес Саркаваг, 6-ого Января*

Эта статья посвещена малоизученного вопроса: исследованию дат христянских праздников.

Основатель неподвижного армянского календаря Ованнес Саркаваг в своей сборнике по имени “Толкование армянского календаря” обратил особое внимание армянским церковним праздникам и их датам. Соответственно этим данным армянский церковный календарь началась 6-ого Января с праздника Рождества Христа и кончилась рожденственским постом. Согласно сведениям Саркавага Христос родился в первом году до нашей эры 6-ого Января и первом году нашей эры был одногодным.

CHRISTMAS DAY AND THE DATE OF HIS BIRTH

Gayane Simonyan

Kew words: *Armenian hurdled calendar, Armenian fixed calendar, the Birth of Christ, Besekist,1460-years cycle, calendar digest, Hovhannes Sarkavag, January 6*

This article is dedicated to one of the poorly studied issues-the study of the dates of Christian Holidays. The founder of Armenian fixed calendar Hovhannes Sarkavag has paid attention to Armenian Church Holidays in his miscellanea. There are interesting recordings and interpretations in the various parts of his “Meknutyun Tumaris Haykaznea” (“The Interpretation of Armenian Calendar”) concerning to the dates of Christian Holidays. According to them Festive Year has begun in January 6=Kaghots 29 and has finished with Christmas Barekendan (the previous Sunday of the forty-day Great Lent). Thus, we are informed that the Christ was born in 1 BC, January 6 and was one year old in 1 AD.